Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Հրատարակություն Հայաստանի Ս. Խ. Հ. Գյուղատնտեսական Կոոպերատիվների Միության— «ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ»-ի:

# ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՄԻԼԻՈՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

631.6
Մ-47

*Լենինականի Տեղ. Տնտ. տպարան*
*1924 թ.*

04 AUG 2010

Հրատարակություն Հայաստանի Ս. Խ. Հ. Գյուղատնտեսական Կոոպերատիվների Միության— «ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ»-ի:

631.6
Մ-47

# ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1008
38511

## ՄԻԼԻՈՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

*Լենինականի Տեղ. Տնտ. տպարան*
*1924 թ.*

27.06.2013
17.199

# ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՄԻԼԻՈՐԱՑԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ.

§ 1. *Միլիորատիվ ընկերությունը հիմնվում է ........................ և նրա գործունեության շրջանը տարածվում է ____________ գավառի ........................ շրջանի վրա և վարչության կենտրոնը համարվելու է ____________ ........................ ։*

§ 2. *Ընկերության նպատակն է կազմակերպել իր անդամների հողերի բարեկարգման միլիորատիվ աշխատանքներ՝ հավաքական միահամուռ յեղանակով, որ կայանում է հողերի հիմնական բարեփոխության և ջրային ամբողջ սիստեմի կանոնավորման և վերանորոգման, վոռոգման ու բաշխման մեջ։*

§ 3. *Հիշատակված նպատակներին հասնելու համար ընկերությունը.—*

*ա) Կազմում է իր անդամներից բանվորական խմբակներ, պարտադիր աշխատանքներ կատարելու համար և ջուրը և նրա վոռոգման սիստեմը ուժեղացնելու համար անցկացնել նոր ջրանցքներ։*

*բ) Կատարում է միլիորատիվ ասպարեզում ամեն*

տեսակի աշխատանքներ, պահպանում է գոյություն ունեցող մելիորատիվ ամեն տիպի կառուցվածքներ ու ձեռնարկներ, կատարում է մելիորատիվ հողամասերի մշակում և զանազան տեսակ կուլտուրական բույսերի մշակություն (բամբակ, ծխախոտ, վազ և յուղատու բույսեր):

գ) Ձեռք է բերում, ինչպես ընկերության անդամներից, նույնպես և հիմնարկություններից, վորպես ընկերության սեփականություն, սերմացու, պարարտացուցիչ նյութեր, կենդանի և մեռյալ գյուղատնտեսական ինվենտար, ամեն տեսակի գործիքներ և արտադրություններ, նյութեր և կահավորանք, ինչպես մելիորատիվ աշխատանքներ կատարելու, նույնպես և հետագայում վառգվող հողի մշակույթ կուլտուրան բարձրացնելու համար:

դ) Հրավիրում է փորձառու վարիչներ ղեկավարության համար, սովորեցնող կամ անհրաժեշտ, հատուկ պատրաստություն պահանջող գույքերի համար ցուցմունքներ տվող մասնագետներ:

ե) Հիմնում է պահեստներ, իր տնտեսության մթերքները պահելու համար:

զ) Հիմնում է արհեստանոցներ, ընկերության արտադրության նյութերը վերամշակության համար:

է) Հիմնում է ֆերմաներ և հատկացնում է հատուկ հողամասեր համայնորեն մշակելու նպատակով, կազմակերպում է կոոպերատիվ վաճառահանում, ընկերության անդամների արտադրած մթերքների:

ը) Կառուցում է ջրաղացներ, ելեքտրաղացներ, հիմնում է գործիքները և մեքենաները վերանորոգող արհեստանոցներ և այնպիսի ձեռնարկություններ, վորոնք կապ ունեն մելիորատիվ ստացված մթերքների վերամշակման գործի հետ:



թ) Ձեռք է առնում միջոցներ տարածելու գյուղատնտեսական օգտակար գիտելիքներ, ինչպես իր անդամների, նույնպես վոչ անդամների մեջ:

ժ) Հարաբերությունների մեջ է մտնում պետական հիմնարկությունների և հասարակական կազմակերպությունների հետ, միջնորդություն է հարուցում նրանց առաջ մելիորատիվ և գյուղատնտեսական հարցերի առթիվ և մասնակցում է համագումարներին ու ժողովներին վերոհիշյալ հարցերի նկատմամբ:

ի) Ընդհանրապես գործում է գոյություն ունեցող օրենքների և սույն կանոնադրության սահմաններում, զարգացնելով ընկերությունը և արմատապես բարեփոխելով ընկերության անդամների և իր գործունեության շրջանի բնակիչների տնտեսությունները:

§ 4. Ընկերությունը օգտվում է իրավաբանական անձի բոլոր իրավունքներով և կարող է բոլոր օրինական միջոցներով ձեռք բերել և օտարացնել գույքերի իրավունք, կնքել պայմանագրեր, վերցնել իր վրա պարտականություններ, հանդես գալ դատարաններում հայցվորի և պատասխանողի դերում:

§ 5. Ընկերության յուրաքանչյուր անդամը մասնակցում է ընկերության ծախսերին այն չափով, ինչ չափով նա մասնակցում է մելիորատիվ հողամասերին:

§ 6 Ընկերության անդամի այն հողամասը, վորը բարելավված է ընկերության միջոցներով և վորի վրա գոյություն ունի գործող մելիորատիվ կառուցվածքներ, յենթակա չեն անդամի կողմից օգտագործման իրավունքը վերացնելու կամ սահմանափակելու:

§ 7. Ընկերության վերցրած պարտականու-

թյունների յեվ կրած վնասների համար ընկերությունը պատասխանում է իր ամբողջ գույքով և դրամագլխով, իսկ հիշյալ աղբյուրներով պարտքերը և վնասները չծածկելու դեպքում, ընկերության անդամները պատասխանատու յեն սույն կանոնադրության հոդ. 22-րդում սահմանված լրացուցիչ պատասխանատվությամբ։

§ 8. Ընկերությունը ունի անվանական կնիք։

## II ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 9. Ընկերության անդամ կարող են լինել տվյալ շրջանի ջրաբաշխությունից օգտվող յերկուսեռի 18 տարեկանից սկսած անձինք, վորոնք խորհուրդների ընտրություններին ունեն ձայնի իրավունք, կամ վորոնց իրավունքները դատարանով սահմանափակված չեն. ընկերության անդամ կարող են լինել նաև զանազան տեսակի արտելներ և նրանց միություններ ու գյուղատնտեսական կազմակերպություններ, վորոնք շահագրգռված են ընկերության նպատակով և գործունեությամբ։ Միլիորատիվ ընկերությունը կարող է միանալ նման ընկերությունների հետ, կազմելով միլիորատիվ միություն տվյալ ջրաբաշխային շրջանում։ Միևնույն ժամանակ մտնում է վորպես անդամ «Հայգյուղկոոպ»ում։

§ 10. Յուրաքանչյուր անդամ մասնակցում է ընկերության ընդհանուր ժողովին վճռական ձայնի իրավունքով և այդ իրավունքը վոչ մի դեպքում փոխանցելի չէ։ Իրավաբանական դեմքերը՝ ընկերություններ և արտելներ մասնակցում են ընդհանուր ժողովին իրենց ներկայացուցիչների միջոցով, վորոնց



թիվը վորոշում է ընդհանուր ժողովը։

§ 11. Անդամների ընդունելությունը կատարում է ընդհանուր ժողովը համաձայն նրանց գրավոր հայտարարության։ Նախնական ընդունելությունը, ընդհանուր ժողովը կարող է հանձնարարել վարչության՝ վերապահելով իրեն հետագայում նրանց հաստատելու իրավունքը։

§ 12. Անդամագրվելու ժամանակ, յուրաքանչյուր անդամ պարտավոր է մուծել մուտքի և փայի վճարները, վորոնց չափը վորոշվում է համաձայն սույն կանոնադրության 27 րդ հոդվածի։

§ 13. Յուրաքանչյուր անդամագրվող պարտավոր է տալ պարտավորագիր, վոր նա իրեն վրա յե վերցնում հավասարապես մյուս անդամների, ընկերության բոլոր պարտավորությունները համաձայն սույն կանոնադրության հոդ. 21-րդի։

§ 14. Նոր անդամագրվողները պատասխանատու յեն յեվ մինչև իրենց անդամագրվելը գոյություն ունեցող պարտավորություններին։

§ 15. Յուրաքանչյուր անդամ իրավունք ունի հայտարարություն տալ իր հեռանալու մասին, վորը ընդհանուր ժողովի կողմից կնդունվի վոչ այլ կերպ, քան ընկերության ընդհանուր շահերը նկատի ունենալով՝ հողամասերի միլիորացման—բարելավեցման ծրագիրը ի կատար ածելու և ընդհանուր ծախսերին անդամին մասնակից անելուց հետո։

§ 16. Ընկերության անդամի հեռանալու օրը համարվում է ընթացիկ տարվա վերջին օրը, յեթե հեռացող անդամը այդ մասին հայտարարել է ընթացիկ տարին վերջանալուց յերեք ամիս առաջ։ Հակառակ պարագայում, հեռանալու օրը կհամարվի հետագա շրջանառության տարվա վերջին օրը։

§ 17. Ընկերության մեռած անդամի հեռանալը համարվում ե նրա մահվան որը։ Մահացող անդամի իրավահաջորդը պարտավոր ե իր վրա վերցնել բոլոր պարտավորությունները մինչև նրա իրավատիրության ստանձնելը, ինչպես և իրավասու յե հասանելի բաժնեվճարները։

§ 18. Այն անդամը, վորը առանց բավականաչափ հարգելի պատճառների թերանում ե կատարել ընկերության հանդեպ իր պարտականությունները, դեմ ե գնում կանոնադրության և ընկերության որինական պահանջներին, կամ ընդհանրապես գործում ե ի վնաս ընկերության, կարող ե հեռացվել ընդհանուր ժողովի կողմից և նրա հեռացման որը համարելու ե ընդհանուր ժողովի կողմից կայացրած վճռի որը։

§ 19. Անդամի հրաժարվելու կամ հեռացնելու մասին հայտարարելուց հետո, անդամը ազատ ե ընկերության աշխատանքներից, բայց նա մնում ե պատասխանատու 15-րդ հոդվածով նախատեսված պարտականությունների։

§ 20. Անդամի հեռանալու, հեռացվելու, կամ մահվան դեպքում նրա որինական հաջորդի բացակայության դեպքում այն գույքը, վոր անդամից անցել ե ընկերությանը՝ ոգտագործման համար, վերադարձվում ե միայն ժամանակամիջոցը լրանալուց հետո, իսկ հողամասը, վորը մտել ե ընդհանուր մելիորացիոն ցանցի մեջ՝ մնում ե մինչև տվյալ հողամասի նկատմամբ արված բոլոր ծախքերի լրացումից հետո։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն հողամասերը, վոր ստացված են կառավարությունից հավաքական յեղանակով, բարելավման նպատակով՝ այդ դեպքում հողորդանների համաձայնությամբ այդ հողամասը մնում ե ընկերությանը։

§ 21. Ընկերության յուրաքանչյուր անդամ,



մյուս անդամների հետ միասին, կրում ե լրացուցիչ պատասխանատվություն, ընկերության պարտքերի հանդեպ (այսինքն յերբ ընկերության գույքով ու կապիտալով հնարավոր չե ծածկել բոլոր պարտքերն ու ծախսերը), սակայն վոչ ավել քան փայավճարի հնգապատիկ չափով։

§ 22. Փայավճարների վերադարձումը դուրս յեկած, մեռած կամ հեռացված անդամին կատարվում ե միայն մելիորացիայի աշխատանքները վերջանալուց հետո։

§ 23. Այն անդամները, վորոնք հեռացված են համաձայն 18-րդ հոդվածի, կարող են կրկին ընդունվել միայն ընդհանուր ժողովի վորոշմամբ։

## III ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 24. Ընկերությունը ունի հիմնական, պահեստի ու հատուկ դրամագլուխներ։

§ 25. Հիմնական դրամագլուխը կազմվում ե փայավճարներից, նվիրաբերություններից, զանազան տեսակի ոգուտների զեղչումներից և փոխառություններից։

§ 26. Ընկերության մեջ մտնելիս ամեն մի անդամ մտցնում ե բաժնեվճար ........ ռ. և անդամավճար ........ ռ.։

Պարտադիր փայերի թիվը յուրաքանչյուր անդամի համար սահմանում ե ընդհանուր ժողովը՝ համաձայն մելիորացման հողամասի տարածության։ Բացի անդամի փայավճարներից, անդամները կարող են գնել ինվենտար և այլ գույքեր, վորոնք անհրաժեշտ են ընկերության գոյության համար՝ հատուկ պայմանով, վորը մշակվում ե անդամի և ընկերության փո

խաղարծ համաձայնության։ Անդամավճարը վոչ մի կերպ յենթակա չի վերադարձի։

§ 27. Փայավճարները և անդամավճարները կարող են մուծվել դրամով կամ նյութեղենով, վերջին դեպքում նյութեղենի գնահատումը կատարում է վարչությունը, համաձայն ընդհանուր ժողովի սահմանած կանոնների։ Փայավճարները կարող են մուծվել մասմաս և վորոշ պայմանով, համաձայն ընդհանուր ժողովի վորոշման։

§ 28. Ընկերության գործունեյությունը դադարեցման դեպքում փայավճարները կվերադարձվեն անդամներին ընկերության պարտքերը վճարելուց հետո։

§ 29. Պահեստի դրամագլուխը գոյանում է մուտքի վճարներից, զուտ օգուտից արված մասհանումներից այն չափով, ինչ չափով վորոշված է ընդհանուր ժողովի կողմից, բայց վոչ պակաս քան 20 տոկոս։ Պահեստի գումարը նախորոշված չէ ընկերության վնասները ծածկելու։ Պահեստի գումարի պահպանման և ծախսելու յեղանակները մշակում է ընդհանուր ժողովը՛

§ 30. Ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող է ստեղծվել դրամագլուխ հատուկ նպատակների համար։ Այդ գումարների ստեղծումը և գործադրումը, ինչպես և նրան անբաժանելի դարձնելը՝ վորոշում է ընդհանուր ժողովը։

§ 31. Ընկերությունը իր շրջանառության միջոցները ուժեղացնելու նպատակով կարող է վերցնել ավանդներ, ստանալ վարկեր, կատարել փոխառություններ, պետական հիմնարկներից, հասարակական կազմակերպություններից և մասնավոր անհատներից, ինչպես և վորոշել պարտադիր վճարումներ իր անդամներից ընթացիկ ծախսերի համար միլիոնավոր սապարեզում։



## IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ։

### Ա. Օգուտ ու վնաս.

§ 32. Ընկերության զուտ օգուտը, բացի հոդ. 29
տոակված 20 տոկոսի, մնացածը անցնում է ընդհա-
ր ժողովի տրամադրության տակ, վորը կարող է
հայեցողությամբ գործադրել հետևյալ նպատակ-
րին.—ա) դրամագլուխներք լրացման և նորերի
եղծման համար՝ ընկերության առաջադրված խըն-
ների համաձայն, բ) վարձատրություն վարչ. ան-
մներին և անդամներին, նրանց կատարած աշխա-
նքների համար, գ) փայավճարներին վորպես դի-
յենտ, բայց վոչ ավելի քան 12 տոկոս։

§ 33. Ընկերության շրջանառությունից առաջա-
վնասները ծածկվում են պահեստի դրամագլխից,
յեթե վնասն այդ ճանապարհով չի ծածկվում,
դեպքում ընդհանուր ժողովը կարող է ծածկել ու-
դրամագլուխներից, կամ գանձել ընկերության ան-
մներից, համեմատ յուրաքանչյուրի պատասխանա-
ւության չափի հոդ. 21 և նշանակել ժամանակամի-
բայց վոչ ուշ քան մինչև տարվա վերջը, վճարե-
իրեն հասանելի գումարները։ Այն ինչ վոր հնա-
որ չի լինի գանձել մինչև տարվա վերջը, այդ
մարը նորից բաժանվում է մյուս անդամների վրա
21-ի սահմաններում։

### 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ։

§ 34. Ընկերության գործերը վարում է ընդհա-
ժողովը և վարչությունը։

### Ա. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ.—

§ 35. Վարչությունը հանդիսանում է ընկերու-

թյան գործադիր մարմինը.—Սա վարում է ընկերո
թյան բոլոր գործերը և ստանձնում է միլիորա
ընկերությունների վերաբերյալ բոլոր իրավունքներ
առանց շեղումի և սույն կանոնադրության սահմա
ներում ու ընդհանուր ժողովի կողմից վորոշված կ
նոններով:

§ 36. Վարչության պարտականություններն

ա) Ընդհանուր ժողովների հրավիրումը:

բ) Ընդհանուր ժողովների վորոշումների գործ
դրումը:

գ) Ընդհանուր գործերի ղեկավարումը ու աշխ
տանքները ընկերության անդամների մեջ բաշխել
նրանց կատարման ընթացքին հետևելը:

դ) Աշխատանքների, ինչպես և ընկերությ
անտեսության ղեկավարման համար մշակել կան
ներ և ներկայացնել ընդհանուր ժողովին ի քննո
թյան ու հաստատմանը:

ե) Ընկերության ոժանդակիչ ձեռնարկությ
ների ղեկավարումը հոդ 3:

զ) Ընդունել դրամական գումարներ և այն ծա
ռել ընդհանուր ժողովի վորոշման և նախահաշիվն
սահմաններում:

է) Գնում և վաճառք ամեն տեսակ նյութեր
ինվենտարի, գույքերի և նրանց հսկողությունը և պ
պանումը:

ը) Տուգանել և այն գանձել ընկերության
դամներից, նրանց անպարտաճանաչության դեպք

թ) Ընկերության ոգտին դատարանով վորոշ
հայցերի գանձումը և ընդհ. կառակը:

ժ) Հրավիրել և արձակել աշխատակիցներ և մ
նագետներ:

ժա) Հաշվետարություն և հաշվետվություն:



դբ) Նախահաշիվներ կազմել:

դգ) Տարեկան հաշվետվություն պատրաստել և
կայացնել ընդհանուր ժողովին ի հաստատություն:

դդ) Ընկերության ընթացիկ բոլոր գործերի ղե-
կավարությունը:

դե) Ցեվ այլ պարտականություններ սույն կա-
րության սահմաններում և ընդհանուր ժողով-
ի վորոշումների համաձայն:

§ 37. Վարչությունը պարտավոր է պահել.—ա)
երության անդամների ցուցակը բ) նրանց փայա-
րների հաշիվները:

§ 38. Վարչության անդամները լինում են յերե-
վոչ պակաս և ընտրվում են մեկ տարով, ընտ-
ում են նաև յերկու անձնափոխանորդներ, անդամ-
ի բացակայության կամ հեռանալու դեպքում նր-
ժամանակավորապես փոխարինելու համար:

§ 39. Վարչության և վերստուգիչ հանձնաժո-
մեջ չեն կարող մտնել միաժամանակ այն ան-
ք, վորոնք մինչև յերկրորդ աստիճանի ազգական-
են:

§ 40. Ընդհանուր ժողովին է վերապահված ընտ-
վարչության նախագահ, թե թողնել այդ վարչու-
թենը իր միջից ընտրելու: Իսկ վարչությունը ընտ-
ում է փոխնախագահ՝ նախագահի բացակայության
քում նրան փոխարինելու համար:

§ 41. Վարչությունը նիստ է ունենում ամսվա-
շաբաթը մեկ անգամ, նիստի ժամանակի մասին
ամները վաղորոք ստանում են հրավիրատոմս:

§ 42. Վարչության բոլոր գրագրությունները
րագրվում են մի անդամի ստորագրությամբ, պայ-
գրերը և այլ ակտերը ու պարտավորությունները
րագրվում են վոչ պակաս քան վարչության յեր-

կու անդամի կողմից, դրանց թվում նախագահի կ[...]
նրա փոխանորդի ստորագրությունը։ Գյուղբանկից
նրա բաժանմունքներից, Վարկային ընկերություննե[...]
րից, փոստից, յերկաթուղակայանից և այլ նման տ[...]
ղերից ապրանք կամ դրամ ստանալիս, կամ ուղարկ[...]
լիս նույնպես անհրաժեշտ է առնվազն վարչությ[...]
նախագահի կամ նրա փոխանորդի ու մեկ անդա[...]
ստորագրությունը և ընկերության կնիքը։

§ 43. Ընդհանուր ժողովը նշանակում է վարչ[...]
թյան անդամներին վարձատրություն, վորպես մշտ[...]
կան ռոճիկ։

§ 44. Վարչության դեմ յեղած բողոքները տր[...]
վում է ընդհանուր ժողովներին։

§ 45. Վարչության պարտազանց անդամը պ[...]
տասխանատու յե իր գույքով՝ ընկերության պատճ[...]
ռած վնասների համար։ Անկախ վնասների հատուց[...]
մից նա յենթարկվում է քրեական պատասխանատ[...]
վության։ Վարչության այս կամ այն անդամին վ[...]
չության կողմից տրված հանձնարարությունների հ[...]
մար պատասխանատու յե միայն հանձնառուն, յե[...]
վարչությունը հնարավորություն չի ունեցել կան[...]
լու պատժելիք վնասները, վարչության այն անդամ[...]
րը, վորոնք դեմ են արտահայտվել այս կամ այն խն[...]
նկատմամբ և իրենց դեմ լինելու մասին գրավոր կ[...]
պով հայտնել են վարչությանը, նրանք ազատ են [...]
վորոշումը հետագայում կյանքի մեջ կիրառելուց առ[...]
ջացած վնասների հանդեպ։

## Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ։

§ 46. Ընդհանուր ժողովի գործունեությանը վե[...]
բերվում են. —



ա) Վարչության, վերստուգիչ և լիկվիդացիոն հանձնաժողովների, լիազորների ընտրությունները, նրանց թիվը սահմանելը, ինչպես և նրանց պաշտոնից հեռացնելը։

բ) Ընդհանուր ժողովին ընտրած մարմինների և անձերի համար ռոճիկի չափով սահմանելը։

գ) Միլիորատիվ աշխատանքների ծրագրի մշակումը, և կանոնադրության լրացումը ու փոփոխումը։

դ) Նախահաշիվների ու հաշվետվությունների քննությունն ու հաստատումը, վնասների ու օգուտների բաշխումը։

յե) Վարչության դեմ հարուցված բողոքների քննությունը։

զ) Քննել վարչության անդամի պատասխանատվությունը, նրա վնասակար և վոչ ուղիղ գործունեության վորոշելը։

է) Ընդհանուր ժողովի հրավիրումն ու նրա աշխատանքների դասավորումն այն չափով, ինչ չափով նախատեսնված չե նա այն կանոնադրությամբ։

ը) Ընկերության գործունեության և հաշիվների վավերացումը լիազորների ժողովի կողմից, կամ վոչ պակաս ընկերության անդամների 2/3 պահանջման, կայացած վորոշումների մասին անհետաձգելիորեն հայտնվում է «Հայգյուղկոոպ»-ին։

թ) Ընթացիկ աշխատանքների ծրագրի հաստատումը։

ժ) Ընկերության անդամների ընտրությունը, ընդունելությունը և հեռացումը։

ժա) Փայավճարների վճարման կարգի մշակումը և նրանց չափի փոփոխումը։

ժբ) Տալ վարչությանը հրահանգներ և հավատարմագրեր, պետական, հասարակական ու մասնա-

վոր անհատներից փոխառություն կնքելու մասին։

ժգ) Տուգանքների չափի վորոշումը։

ժդ) Պահեստի դրամագլուխներից անդամներին՝ արվելիք վարկի նպատակների վորոշումը։

ժե) Լուծումն բոլոր այն հարցերի, վորոնք վարչության իրավասության սահմաններից դուրս են։

§ 47. Ընդհանուր ժողովը հրավիրվում է տարեկան վոչ պակաս մեկ անգամ, բայց կարող է արտակարգ ընդհանուր ժողով հրավիրվել, վարչության հատուկ վորոշմամբ, վերստուգիչ հանձնաժողովի և ընկերության անդամների մեկ տաս յերրորդի պահանջմամբ. յեթե ընդհանուր ժողով չի հրավիրվի յերեք շաբաթվա ընթացքում (հաշված այն օրվանից, յերբ այդ մասին վարչությունը ստացել է դիմում) այդ դեպքում հրավիրվում է վերստուգիչ հանձնաժողովի կողմից։

§ 48. Ընդհանուր ժողովի հրավիրման մասին ծանուցվում են բոլոր անդամներին՝ հիշեցնելով ժողովի ժամանակի և օրակարգի մասին։ Այդ մասին պետք է փակցնել նաև վարչության գրասենյակի պատին։

§ 49. Ընդհանուր ժողովը համարվում է օրինական, յերբ մասնակցում են այնտեղ ընկերության անդամների առնվազն մեկ յերրորդ մասը։ Իսկ այն դեպքում յերբ ընդհանուր ժողովը հրավիրվում է քննելու ընկերության լիկվիդացիայի խնդիրը, անդամների պատասխանատվության չափի ու կանոնադրության փոփոխումը, վնասների ու մելիորատիվ ծախսերի դասավորումը, այդ դեպքում պահանջվում է անդամների առնվազն կեսի ներկայությունը։

§ 50. Յեթե ընդհանուր ժողովը նշանակման օրը չի համարվում, այդ դեպքում մեկ շաբաթից վոչ ուշ նշանակվում է յերկրորդ ընդհանուր ժողովը նույն



օրակարգով և անկախ ներկա յեղողների թվից, լուծվում են հարցերը, առնվազն անդ. 1/3-ը։

§ 51. Յուրաքանչյուր ընդհանուր ժողով ընտրում է իր միջից նախագահ։ Նախագահ չեն կարող լինել վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները։ Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները ընդհանուր ժողովներին քվեարկում են սովորական անդամի ձայնի իրավունքով և ձեռնպահ են մնում, յերբ հարցը վերաբերում է նրանց գործունեյության վերագնահատությանը, նրանց վարձատրությանը, նրանց պատասխանատվության կանչելուն և հաշվետվությունները հաստատելուն։

§ 52. Հատուկ դրամագլուխներ ստեղծելու, պարտադիր անդամավճարներ նշանակելու, անդամների պատասխանատվության չափի փոփոխման, անդամի հեռացման և ընկերության գործունեյության լիկվիդացիայի համար պահանջվում է ժողովի անդամների յերկու յերրորդի ձայնատվությունը, իսկ մնացած բոլոր մյուս հարցերը լուծվում են ձայների պարզ մեծամասնությամբ։

§ 53. Ընդհանուր ժողովի վորոշումներն արձանագրվում են հատուկ մատյանում և ստորագրվում ժողովի նախագահի, վարչության ներկա անդամների և ընդհանուր ժողովի առնվազն հինգ անդամի կողմից։ Արձանագրությանը կցվում է ժողովին ներկա գտնված բոլոր անդամների անվանացուցակը։ Ընդհանուր ժողովի օրինական վճիռները պարտադիր են թե ներկա և թե բացակա անդամների համար։

§ 54. Ընդհանուր ժողովում յուրաքանչյուր անդամ իրավունք ունի պահանջելու արձանագրության մեջ մտցնելու իր դիտողությունները, յեթե նա գտնում է, վոր ընդհանուր ժողովի վորոշումը օրենքից

դուրս ե կամ ընկերությանը ի վնաս։

§ 55. Մեծ ընկերություններում, վորտեղ անդամների թիվը 200-ից անցնում ե, ընդհանուր ժողովը կարող ե իր իրավունքները տալ լիազորների ժողովին, վորին և ընտրում ե ընդհանուր ժողովը։

§ 56. Լիազորների ժողովը ընտրվում ե մեկ տարով. ներկայացուցիչների թիվը վորոշում ե ընդհանուր ժողովը։

## Գ. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ։

§ 57. Վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում ե ընդհանուր ժողովի կողմից, մեկ տարի ժամանակով և առնվազն 3 հոգուց։

§ 58. Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում ե վարչության բոլոր հաշիվները, նախահաշիվները և իր յեզրակացությամբ ներկայացնում ե ընդհանուր կամ լիազորների ժողովին, ինչպես և փաստորեն վերստուգման ե յենթարկում ընկերության ամբողջ գույքն ու կարողությունը և բոլոր մասնակցողների գործունեյությունները առանձին-առանձին, վորի համար վարչությունը պարտավոր ե ներկայացնել Վ. Հ. նրա պահանջած բոլոր մատյանները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Վերստուգիչ հանձնաժողովի պեկուցումը մինչև ընդհանուր կամ լիազորների ժողովին ներկայացնելը, պետք ե ներկայացնել վարչությանը համապատասխան բացատրություններ տալու համար։

§ 59. Վ. Հ. դեմ հարուցված բողոքները ներկայացվում են ընդհանուր ժողովին, նույն հանձնաժողովի միջոցով, վորը և պարտավոր ե ներկայացնել առաջիկա ժողովին իր բացատրությամբ։



§ 60. Վերստուգիչ հանձնաժողովի վերստուգումից անկախ՝ «Հայգյուղկոոպ»ին ե վերապահվում իր հրահանգիչների միջոցով կատարելու պարբերական ու արտակարգ վերստուգումներ ու քննություններ։

## Դ. ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ։

§ 61. Ընկերության մեջ պարտադիր կերպով տարվում են.—

ա) Դրամական շրջանառության մատյան։

բ) Ընկերության անդամների անվանական ցուցակ, յուրաքանչյուրի անձնական բոլոր տեսակի և նրան պատկանյալ փայավճարի հաշիվները։

գ) Բանվորական որացուցակ, կատարված աշխատանքների և թե յուրաքանչյուր անդամին աշխատանքի վորքան բաժին ե ընկնում։

դ) Գույքերի և ինվենտարի ցուցակ։

յե) Ապրանքային տեղեկագիր, մթերքների և նյութեղենի, վորոնք մուտք են գործում պահեստ և պահեստից դուրս։

զ) Այլ տեսակի մատյանների տանելը վարչության հայեցողության ե թողնվում։

§ 62. Ընկերության հաշվետվության տարին հաշվում ե հոկտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա սեպտեմբերի 30-ը, իսկ առաջին հաշվետու տարին հաշվում ե ընկերության բացման օրից մինչև սեպտեմբերի 30-ը։

§ 63. Վարչությունը պարտավոր ե հաշվետվության տարին լրանալուց, վոչ ուշ քան 3 ամիս անց, հրավիրել ընդհանուր կամ լիազորական ժողով և ներկայացնել նրան տարեկան հաշվետվությունը ի հաստատություն։ Հաշվետվությունն իր մեջ պետք ե ու-

նեն՝ա, բոլոր մանրամասն տեղեկությունները ընկերության գործունեյության և շրջանառության մասին և մանավորապես պետք է տված լինի. հաշվեկշիռը, օգուտն ու վնասը և ընկերության կազմի մեջ կատարած փոփոխությունը։

§ 64. Մինչև ընդհանուր ժողովին ներկայացնելը, հաշվետվությունը մատյանների և փաստաթղթերի հետ միասին, ստուգման է յենթարկում վերստուգիչ հանձնաժողովը և իր յեզրակացությունը դնում է հաշվետվության վրա։ Այդ հաշվետվությունը ընդհանուր ժողովը քննության է առնում։

§ 65. Ընդհանուր ժողովի կողմից հաստատված հաշվետվությունը պահվում է ընկերության գործերում, իսկ նրա պատճենը ներկայացվում է «Հայգյուղկոոպ»-ին։

## V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ։

§ 66. Ընկերությունը լիկվիդացիայի յե յենթարկվում ընդհանուր կամ լիազորական ժողովի վորոշմամբ։

ա) յեթե անդամների թիվը 15-ից պակաս է և չե լրացվել այն մինչև լիկվիդացիոն ժողովի հրավիրելը։

բ) Գյուղկոոպի վորոշմամբ, յեթե ընկերության գրանցման յենթարկվելու օրվանից մեկ տարվա ընթացքում չե սկսում իր գործունեյությունը։

§ 67. Հոդ. 65-ով նախատեսնված դեպքերու վարչությունը կամ լիազորների ժողովը պարտավոր անմիջապես հրավիրել ընդհանուր ժողով, վորը վորո շում է ընկերության լիկվիդացիան և սահմանում նրա համար կանոններ։



§ 68. Ընդհանուր ժողովի արձանագրությունը լիկվիդացիայի մասին ուղարկվում է «Հայգյուղկոոպ»ին և հայտարարվում է տեղական թերթում։

§ 69. Ընկերության գործերի լիկվիդացիան կատարում են վարչությունը, յեթե այդ առթիվ ընդհանուր ժողովը հատուկ վորոշում է կայացրել։ Իսկ լիկվիդացիոն հանձնաժողով ընտրելու դեպքում նրա կազմը պետք է լինի 3-ից վոչ պակաս։

§ 70. Լիկվիդացիոն հանձնաժողովի անդամները յենթարկվում են այն ընդհանուր կանոններին, վորոնք սահմանված են վարչության անդամների համար և կրում են նույն հիմունքներով պատասխանատվություն՝ ընկերությանը պատճառած վնասների համար, ինչպես և յենթակա յեն վերստուգիչ հանձնաժողովի հսկողությանը։

§ 71. Լիկվիդացիոն հանձնաժողովը կատարում է վարչության պարտականությունները—գանձում է ընկերության ստանալիքները և վաճառքի է հանում նրա գույքն ու կարողությունը։ Լիկվիդացիոն հանձնաժողովը նոր պարտականությունների մեջ կարող է մտնել միայն այն դեպքում, յեթե այդ առթիվ ընդհանուր ժողովը տվել է հատուկ լիազորություններ։

§ 72. Յեթե ընկերության գույքը չե բավականացնում փակելու բոլոր նրա պարտքերը, այդ դեպքում լիկվիդացիոն հանձնաժողովը լրացուցիչ վճար է գանձում անդամներից ........ հոդվածում վորոշված չափի սահմաններում։

§ 73. Փայավճարների վերադարձումը տերերին, չի կարող կատարվել, մինչև ընկ. բոլոր պարտքերի հաշիվները չփակվեն. վիճելի պարտքերի, վորոնց ժամանակը դեռ չե լրացել, հաշվեհարդար կատարելու համար հատկացվում է հատուկ դրամագլուխներ։

§ 74. Պարտքերի և փայավճարների հատուցումից հետո, մնացած գույքն ու գումարները լիկվիդացիոն հանձնաժողովը գործադրում է ընդհանուր կոոպերատիվ և հանրոգուտ նպատակների համար՝ ընդհանուր ժողովի վորոշման համաձայն։

Կյանքի մեջ է մտնում նաև հնդհանուր ժողովի վորոշումը, բարելավված հողամասերի հետագայում ոգտագործելու մասին հանած վորոշումները։

§ 75. Լիկվիդացիան վերջանալուց հետո՝ լիկվիդացիոն հանձնաժողովը կազմում է ընդհանուր հաշվետվություն և զեկուցում իր աշխատանքների մասին և վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացությամբ ներկայացնում է ընդհանուր ժողովին ի հաստատություն։ Ընդհանուր ժողովի կողմից հիշյալ հաշվետվությունը հաստատելուց հետո ներկայացվում է այն, ընկերության բոլոր մատյանների, հաշիվների և կնիքի հետ միասին, Հայգյուղկոոպկենտրոնին։

Հիմնադիրներ՝

ՀՀ Ազգային գրադարան
NL0295411

17.199